

ՕՐԲԵԼԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ



Fyodor Orbelian



Levon Orbelian



Hrachya Orbi

Օրբելի եղբայրները աշխարհահռչակ և ականավոր հայ գիտնականներ են, ովքեր մեծ ավանդ ունեն գիտության մի շարք ոլորտների զարգացման գործում:

Օրբելի եղբայրների (Մյունխաց Օրբելյանների) տոհմը հին հայկական իշխանական ծագում ունի: Այն սերում է Մամիկոնյաններից, Ջաքարյաններից: 13-15-րդ դարերում Մյունիքը անցել է Օրբելյանների տոհմի տիրակալության տակ: Տոհմի գերեզմանատունը գտնվում է Նորավանքում, որտեղ էլ թաղված է տոհմի պատմաբան Մտեփանոս Օրբելյանը: Համաձայն նրա՝ Օրբել անունը ծագում է Վրաստանում Օրբետ գյուղի մոտ գտնվող համանուն ամրոցի անունից: Օրբելի եղբայրների հայրական պապը՝ Հովսեփ Հովակիմի Օրբելին (1810-1891), ուսանել է Մոսկվայի Լազարյան ձեմարանում, որն ավարտելուց հետո անցել է հոգևոր ծառայության: Նա մահացել է 1891 թ., թաղված է Թիֆլիսի Խոջիվանքի հայկական եկեղեցու բակում: Հովսեփ Հ. Օրբելին հինգ երեխա է ունեցել՝ երեք որդի և երկու դուստր: Նա, բարձր գնահատելով կրթության և գիտության դերը անհատի կյանքում, երեք որդիներին հիմնավոր կրթության է տվել: Նրա երկու որդիները՝ Դավիթը և Համազասպը, ավարտել են Խարկովի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Դավիթ Օրբելին հոգեբույժ-ջղախտաբան էր, Համազասպը՝ Թիֆլիսում հայտնի բժիշկ-ատամնաբույժ:

- Ռուբեն Օրբելի
- Լևոն Օրբելի
- Հովսեփ Օրբելի

Ծնողները



Աբգար Հովսեփի Օրբելին՝ Օրբելի եղբայրների հայրը, (1849-1912), Հովսեփ Հ. Օրբելու ավագ որդին է, ծնվել է Ռուսական կայսրության հարավային շրջանների իշխանական տոհմում: Ա. Օրբելին ավարտել է Սանկտ Պետերբուրգի կայսերական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Նա, ուսման ավարտից հետո, հոր պահանջով վերադարձել է հայրենիք և, իբրև հաշտարար դատավոր, պաշտոնավարել է Արաքսի Նախիջևան քաղաքում, Նոր Բայազետում, ապա՝ Քութայիսում: Հետագայում, Թիֆլիս տեղափոխվելուց հետո, աշխատել է որպես դատախազի օգնական, այնուհետև զբաղվել է մասնավոր փաստաբանական գործունեությամբ:



Վարվառա Մովսեսի Արղության-Երկայնաբազուկի՝ Օրբելի եղբայրների մայրը, (1857-1937), նույնպես իշխանական ծագում ունի: Երկայնաբազուկները սերում էին Ջաքարյաններից: Երկայնաբազուկ՝ Միսագրձեղի, մականունը տվել է վրաց թագավոր Գեորգի 3-րդը ամիրսպասալար Սարգիս Ջաքարյանին, ում հետնորդները, 13-րդ դարի վերջին, Մոնղոլիայում հանդես գալով որպես վասալներ, անվանվում են «Արգուտ» կամ «Արգուն», որը նշանակում է «պաշտպան, հենարան, թիկունք», և նույնացվում էր վրացական «Միսագրձեղի»՝ «Երկայնաբազուկ» անվան հետ: Ահա այսպես, Ջաքարյանների հետնորդները սկսում են կոչվել Արղության-Երկայնաբազուկներ: Վ.

Արդության-Երկայնաբազուկը կրթված կին էր, հիանալի տիրապետում էր չորս լեզուների, հետևում էր ելսանների դաստիարակությանը և ուսմանը:

Օրբելի եղբայրներն, իրենց ուսումնառության ողջ ընթացքում, մշտապես նամակագրական կապ են պահպանել իրենց մոր հետ, ով արտակարգ հոգատար էր զավակների նկատմամբ, բայց և թույլ չէր տալիս ավելորդ չարաճճիություն: Նա, Ա. Օրբելու մահից հետո, սկսում է դասավանդել ֆրանսերեն և միաժամանակ զբաղվել հասարակական գործունեությամբ: Վ. Արդության-Երկայնաբազուկը թաղված է Թիֆլիսի Խոջիվանքի հայկական եկեղեցու բակում:



Ռուբեն Աբգարի Օրբելյան 1880 - 1943




Ռուբեն Օրբելին ծնվել է 1880 թ. փետրվարի 26-ին Նախիջևանում: Հայ հնագետ է, հանդիսանում է ստորջրյա հնագիտության հիմնադիրը ՍՍՀՄ-ում: **Լևոն և Հովսեփ Օրբելիների** ավագ եղբայրն է: Նա նախնական կրթությունը ստացել է Քուրայիսում, ապա Թիֆլիսի III դասական գիմնազիայում: 1903 թ.-ին ավարտել է Սանկտ Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որից հետո դասախոսել է նույն համալսարանում: 1906 թ.-ից հանդիսացել է քաղաքացիական իրավունքի մագիստրոս:

Տեսական կուրսեր է անցել Բեռլինի և Ենայի համալսարաններում, ստացել է Ենայի համալսարանի իրավունքի դոկտորի գիտական աստիճան: Ռուբեն Օրբելին տիրապետել է 12

օտար լեզվի (ռուսերեն, վրացերեն, հայերեն, լատիներեն, հունարեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, շվեդերեն, իտալերեն, հին իտալերեն): 1918 թ.-ից մանկավարժական աշխատանք է կատարել Տաբրովի համալսարանում: 1943 թ.-ից ղեկավարել է ՍՍՀՄ ծովերում և գետերում ստորջրյա աշխատանքների հատուկ նշանակման կարմրադրոշ արշավախումբը՝ ԵՊՐՕՆ (ռուս.՝ ЭПРОН-экспедиция подводных работ особого назначения): Նա հաստատել է, որ Լեոնարդո դա Վինչին եղել է ջրասուզական գործի խոշոր գիտակ, նրան վերագրել ստորջրյա իջեցումների համար նախատեսված գազային շնչառական սարքի գյուտը: Ռ. Օրբելին իր աշխատանքներում գիտականորեն հավաստել է, որ Լեոնարդո դա Վինչին եղել է Հայաստանում և, ի թիվս իրեն մատչելի աշխարհագրական տարածքի ծովերի ու գետերի, իր ձեռագրերում հիշատակել է Հայաստանի գետերը: Նա ճշգրտել է ջրասուզական զանգի հայտնագործման տարեթիվը: Նրա ղեկավարած արշավախումբը հայտնաբերել է ստորջրյա հունական քաղաքի մնացորդներ Ղրիմում, հնադարյան նավահանգստային կառույցներ՝ Օլվիայում, Խերսոնեսում և այլուր: 1939 թ.-ին արշավախումբը Բուզ գետից անվնաս հանել է մոտ 2500 տարի առաջ սուզված միափայտ սկյութական նավակ, որն այժմ ցուցադրված է Սանկտ Պետերբուրգի ռազմածովային թանգարանում: Նա առաջարկել է հնագույն իրերը ջրից հանելու և պահպանելու մեթոդներ, սովել ստորջրյա կառույցները պաշտպանելու նպատակով ծովափերն ամրացնելու գաղափարը: Ռ. Օրբելին գիտական շրջանառության է մտցրել «ստորջրյա հնագիտություն» եզրույթը (հետագայում առաջարկել է «հիդրոհնագիտություն» ձևը): Նա հեղինակ է իրավաբանական մի շարք աշխատությունների, գերմաներենից ռուսերեն է թարգմանել Օ. Բարի, ֆրանսերենից՝ Ա. Միշելի գործերը: Ռ. Օրբելին մահացել է 1943 թ. մայիսի 09-ին Մոսկվայում:


Լևոն Արգարի Օրբելյան 1882 - 1958



Լևոն Օրբելին ծնվել է 1882թ. հուլիսի 06-ին Ծաղկաձորում (նախկինում՝ Դարաչիչակ): Հայ ֆիզիոլոգ է, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ուսմունքի ստեղծողներից է հանդիսանում: Նա միաժամանակ հանդիսացել է ՍՍՀՄ ԳԱ (1935), ՀՍՍՀ ԳԱ (1943), ՍՍՀՄ ԲԳԱ (1944) ակադեմիկոս, ՌՍՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1934), սոցիալիստական աշխատանքի հերոս (1945), բժշկական ծառայության գեներալ-գնդապետ:

Ռուբեն և Հովսեփ Օրբելիների եղբայրն է: Լ. Օրբելին 1904 թ.-ին ավարտել է Սանկտ Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան: 1907-1920 թթ.-ին աշխատել է Պետրոգրադի փորձառական բժշկագիտության ինստիտուտում: 1909-1911 թթ.-ին գործուղվել է արտասահման, աշխատել է Անգլիայի, Գերմանիայի խոշորագույն ֆիզիոլոգիական լաբորատորիաներում և Նեապոլի ծովային կենսաբանական կայանում: 1918-1957 թթ.-ին ղեկավարել է Պ. Ֆ. Լեսգաֆտի անվան ինստիտուտի ֆիզիոլոգիայի լաբորատորիան, 1920-1931 թթ.-ին եղել է Լենինգրադի 1-ին բժշկական ինստիտուտի պրոֆեսոր, 1925-1950 թթ.-ին՝ Ս. Ս. Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիայի ֆիզիոլոգիայի ամբիոնի պետ (1943-1950), ՍՍՀՄ ԳԱ Ի. Պ. Պավլովի անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի նախագահ (1936-1950), ՍՍՀՄ ԲԳԱ Ի. Պ. Պավլովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և բարձրագույն նյարդային գործունեության ախտաբանության ինստիտուտի նախագահ (1939-1950), ՍՍՀՄ ԳԱ կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1939-1948), փոխնախագահ (1942-1946): 1956 թ.-ին կազմակերպել և ղեկավարել է ՍՍՀՄ ԳԱ Ի. Ս. Սեչենովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ինստիտուտը: Լ. Օրբելին Ի. Պ. Պավլովի մերձավոր աշակերտն ու աշխատակիցն է եղել, ում մահից հետո նախագահել է նրա անվան ֆիզիոլոգիական համամիութենական ընկերության կենտրոնական վարչությունը: Նա զարգացրել է Ի. Պ. Պավլովի բարձրագույն նյարդային գործունեության մասին ուսմունքը և ցույց է տվել, որ պայմանական ռեֆլեքսների մշակման գործընթացը կարող է բացատրել ֆիզիոլոգիական ֆունկցիաների համադասեցման զարգացման ընթացքը: Լ. Օրբելու ստեղծած ֆունկցիաների համադասեցման մասին ուսմունքից էլ հետագայում սկիզբ են առել նրա ստեղծած գիտական ուղղությունները Էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և վեգետատիվ նյարդային համակարգի բնագավառներում: Լ. Օրբելու աշխատանքները համաաշխարհային ճանաչում ունեն: Դրանք նշանակալի ազդեցություն են ունեցել ֆիզիոլոգիայի տարբեր բաժինների զարգացման գործում: Օրբելի-Գինեցինսկու երևույթի հայտնաբերմամբ (1923) ստեղծվեց նոր տեսություն սիմպաթիկ նյարդային համակարգի հարմարվողական-սնուցողական ֆունկցիայի մասին: Լ. Օրբելին, լինելով ֆիզիոլոգիայում էվոլյուցիոն ուղղության հիմնադիրը, ձևակերպել է այդ ուղղության մեթոդներն ու խնդիրները, որոնք պարզաբանում են կենդանի օրգանիզմների ֆունկցիաների զարգացման ողջ պատմությունը՝ կապված արտաքին և ներքին միջավայրերի շարժուն փոխանակության հետ: Նրա մշակած էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի սկզբունքները, որպես հզոր հետազոտական միջոց, լայնորեն կիրառվում են ժամանակակից հետազոտություններում: Լ. Օրբելին նշանակալի աշխատանքներ է կատարել ուղեղիկի ֆիզիոլոգիայի բնագավառում, ցույց է տվել, որ օրգանիզմի ռեֆլեքտոր գործունեության համընդհանուր կարգավորումն իրագործվում է հիմնականում այդ օրգանի արգելակիչ ֆունկցիայի շնորհիվ: 1930-ական թթ.-ից նա լայն հետազոտություններ է կատարել ստորջրյա և ավիացիոն ֆիզիոլոգիայի բնագավառներում: Լ. Օրբելին հիմնավորել է ողնուղեղային կոորդինացիաների դինամիկության տեսությունը: Նրա ղեկավարությամբ կատարվել են զգայարանների ֆիզիոլոգիայի, հարմարվողականության գործընթացների, աֆերենտ համակարգերի փոխներգործությունների բնագավառներում: Լ. Օրբելին ստեղծել է ֆիզիոլոգիական ամենաընդարձակ դպրոցներից մեկը: Նա կարևոր ավանդ ունի ՀՍՍՀ-ում ֆիզիոլոգիայի զարգացման գործում: Նրա աշակերտներն են եղել Է. Հասրաթյանը, Ա. Քարամյանը, Ա. Ալեքսանյանը և այլք: Լ. Օրբելու անվամբ է կոչվում ՀՍՍՀ ԳԱ (ներկայիս՝ ՀՀ ԳԱԱ) ֆիզիոլոգիայի ինստիտուտը: Լ. Օրբելին եղել է Փարիզի կենսաբանական ընկերության (1930), բնախույզների գերմանական «Լեոպոլդինա» ակադեմիայի (1931), անգլիական ֆիզիոլոգիական ընկերության պատվավոր (1946) և արտասահմանյան այլ ակադեմիաների ու ընկերությունների անդամ: Նա ստացել է Պավլովի անվան (1937) և ՍՍՀՄ պետական (1941) մրցանակներ և Մեչնիկովի անվան ոսկե մեդալ (1946), ինչպես նաև պարգևատրվել է Լենինի 4, Կարմիր դրոշի 2, Աշխատանքային կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշաններով ու մեդալներով: Լ. Օրբելին մահացել է 1958 թ.-ի դեկտեմբերի 09-ին Լենինգրադում: Լևոն Օրբելու կիսանդրին գտնվում է ՀՀ ԳԱԱ Երևանի Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի բակում:

Հովսեփ Արգարի Օրբելյան 1887- 1961



Հովսեփ Օրբելին ծնվել է 1887 թ.-ի մարտի 20-ին Քութախում: Աշխարհահռչակ հայ արևելագետ, հնագետ և հասարակական գործիչ է: Նա հանդիսացել է ՄՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1935), ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս: Հ. Օրբելին հիմնադրել է Հայաստանի ազգային ակադեմիան և եղել է առաջին նախագահը (1943-1947): **Ռուբեն և Լևոն Օրբելիների** եղբայրն է: Հ. Օրբելին 1904 թ.-ին ավարտել է Թիֆլիսի արական III գիմնազիան, 1911 թ.-ին՝ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը՝ զուգահեռ հաճախելով նաև արևելագիտության ֆակուլտետի հայերեն-վրացերեն-պարսկերեն բաժնի դասընթացներին: Աշակերտել է ականավոր գիտնականներ Նիկողայոս Մառին, Ն.

Ադոնցին, Ի. Ա. Ջավախիշվիլուն, Յա. Ի. Սմիռնովին և ուրիշների: Նա դեռևս ուսանողական տարիներից զբաղվել է գիտական գործունեությամբ, Բրոկհաուզի և Եֆրոնի նոր հանրագիտական բառարանի համար գրել է հայկական, վրացական և իսլամական արվեստին վերաբերող հոդվածներ: Հ. Օրբելին 1906-1917 թթ.-ին Ն. Մառի ղեկավարությամբ մասնակցել է Անիի պեղումներին և այլ հնագիտական արշավախմբերին: 1909 թ.-ին ուսումնասիրել է Լեռնային Ղարաբաղի հայկական արձանագրությունները: Համալսարանն ավարտելուց հետո աշխատել է հայ-վրացական բանասիրության ամբիոնում: 1911-1912 թթ.-ին Սանկտ-Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի գործուղմամբ ուսումնասիրել է Մոկսի հայերի և քրդերի բարբառն ու բանահյուսությունը, Էրզրումի, Բայազետի, Վանի, Աղթամարի, Բագավանի ճարտարապետական հուշարձանները, հնագիտական պեղումներ է կատարել Թոփրակկալեում և Հայկաբերդում: 1912 թ.-ին ընտրվել է Սանկտ Պետերբուրգի ռուսական հնագիտական ընկերության անդամ: Սկսած 1914 թ.-ից Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետում դասավանդել է հնագիտություն և Հայաստանի պատմություն, հայկական արձանագրագիտություն, քրդերեն: 1916 թ.-ին Վանում Ն. Մառի հետ պեղումներ կատարելով՝ հայտնաբերել է Էնուրարտուի թագավոր Սարդուրի Բ-ի մեծածավալ սեպածև արձանագրությունը: 1917-1918 թթ.-ին շարունակել է աշխատանքը Պետրոգրադի համալսարանում, դասավանդել է նաև Հնագիտության ինստիտուտում, Մոսկվայի Լագարյան ձեմարանում, ընտրվել է Պետական հնագիտական հանձնաժողովի խորհրդի անդամ, Մոսկովյան հնագիտական ընկերության իսկական անդամ: 1919 թ.-ին Հ. Օրբելին նշանակվել է Լուսժողկոմատի թանգարանների գործերով կոլեգիայի գիտական քարտուղար, մեծ աշխատանք է կատարել մասնավոր հավաքածուների թանգարանային նմուշները պետական սեփականություն դարձնելու ուղղությամբ: Նա մասնակցել է նյութական մշակույթի պատմության Ռուսաստանյան (հետագայում՝ Պետական) ակադեմիայի հիմնադրմանը, 1919 թ.-ի օգոստոսին ընտրվել է այդ ակադեմիայի անդամ, գլխավորել է Հայաստանի և Վրաստանի հնագիտության ու արվեստի բաժինը, 1920 թ.-ից՝ ակադեմիայի հրատարակչությունը, 1921-1922 թթ.-ին՝ տպարանը: 1920 թ.-ին ընտրվել է Լենինգրադի Էրմիտաժի ավանդապահ, 1926 թ.-ին հիմնադրել և գլխավորել է Արևելքի բաժինը, 1934 թ.-ին նշանակվել է Էրմիտաժի տնօրեն և ղեկավարել է այն մինչև 1951 թ.-ը: 1928-1929 թթ.-ին և 1936 թ.-ին Հ. Օրբելին, որպես գիտական արշավախմբի ղեկավար, աշխատել է Դաղստանում, Հայաստանում և ուսումնասիրել է Գառնիի, Պտղնիի, Փարպիի, Աշտարակի, Ամբերդի հուշարձանները: 1931 թ.-ին Լոնդոնում մասնակցել է Իրանական արվեստի և հնագիտության միջազգային II, 1935 թ.-ին Լենինգրադում-Մոսկվայում՝ III համաժողովներին և կարդացել է զեկուցումներ: 1937-1938 թթ.-ին համատեղության կարգով եղել է ՄՍՀՄ ԳԱ Նյութական մշակույթի պատմության ինստիտուտի տնօրենը, 1938 թ.-ին ընտրվել է ՄՍՀՄ ԳԱ հայկական բաժանմունքի (Արմֆան) նախագահության նախագահ: Հայրենական պատերազմի սկզբին կազմակերպել է Էրմիտաժի գեղարվեստական արժեքների էվակուացիան Սվերդլովսկ, այնուհետև, մնալով պաշարված Լենինգրադում, ապահովել է Էրմիտաժի և մի շարք այլ հավաքածուների՝ քաղաքում գտնվող թանգարանային նմուշների պահպանումը: 1942 թ.-ին հիվանդ վիճակում Լենինգրադից տեղափոխվել է Երևան, 1943 թ.-ին ընտրվել է ՀՍՍՀ նորաստեղծ ԳԱ իսկական անդամ և նախագահ: 1944 թ.-ի հունիսին վերադարձել է Լենինգրադ, ղեկավարել է Էրմիտաժի վերականգնման աշխատանքը: Հ. Օրբելին 1946 թ.-ին Նյուրնբերգի դատավարությանը մասնակցել է որպես մեղադրության վկա, մերկացրել է ֆաշիստական բարբարոսների հանցագործությունները Լենինգրադի նկատմամբ: 1951-1953 թթ.-ին եղել է ՀՍՍՀ ԳԱ հնագիտական արշավախմբերի կոնսուլտանտ-ղեկավարը: 1955 թ.-ի նոյեմբերին նշանակվել է Լենինգրադի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի ղեկան, 1956 թ.-ի հուլիսին՝ նաև Մերձավոր և Միջին Արևելքի պատմության ամբիոնի վարիչ: 1956 թ.-ին հիմնադրել և մինչև կյանքի վերջը ղեկավարել է ՄՍՀՄ ԳԱ

Արևելագիտության ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքը: Հ. Օրբելու ուսումնասիրությունները վերաբերում են հայագիտությանը («Հայագիտական հետազոտություններ», պր. 1, 1974 թ.), հնագիտությանը (կազմել է Անիի հնադարանում պահվող և այժմ մեծամասամբ կորսված հնագիտական գտածոների գիտական նկարագրությունը և այլն): Նա հանդիսանում է ժամանակակից հայ վիմագրության հիմնադիրը: Դեռևս 1914-1917 թթ.-ին, հիմնականում «Խրիստյանսկի Վոստոկ» («Христьянский Восток») հանդեսում տպագրել է Անիի արձանագրությունների իր ուսումնասիրությունները (հետմահու լույս են տեսել «Դիվան հայ վիմագրության», պր. 1, 1966 թ.): Հ. Օրբելին պատվիրել է հատուկ տառատեսակ, որը հնարավորություն է տվել վերարտադրել արձանագրությունները՝ պահպանելով դրանց ձևը: Նա զբաղվել է նաև բանահավաքությամբ, բարբառագիտությամբ, կազմել է հայկական և քրդական բարբառների բառարաններ: Նա խմբագրել է «Մասունցի Դավիթ» դյուցազնավեպի համահավաք բնագիրը և ռուսերեն թարգմանությունը, հրատարակել է դրան նվիրված հատուկ ուսումնասիրություն («Հայկական հերոսական էպոսը», 1956 թ., ռուսերեն և հայերեն): Հ. Օրբելին ուսումնասիրել և ռուսերեն է թարգմանել հայկական միջնադարյան առակները («Միջնադարյան Հայաստանի առակներ»-ը, 1956 թ., ռուս.): Նա ռուսերեն է թարգմանել նաև հայ պատմիչների՝ Եղիշեի, Ղազար Փարպեցու, Թովմա Արծրունու երկերը, (Եղիշե, «Վարդանի և հայոց պատերազմի մասին», 1971 թ., ռուս.), մեծ մասը անտիպ: Ճարտարապետության բնագավառում արժեքավոր է Աղթամարի տաճարի նրա ուսումնասիրությունը: Հ. Օրբելին կազմել է Անիի և շրջակայքի ճարտարապետական և հնագիտական հուշարձանների հավաստի ուղեցույց, զբաղվել է հին և միջնադարյան իրանական արվեստի պատմությամբ, Կ. Վ. Տրևերի հետ ուսումնասիրել է Էրմիտաժում պահվող Մասանյան ժամանակաշրջանի մետաղե անոթները («Մասանյան մետաղը: Գեղարվեստական առարկաներ ոսկուց, արծաթից և բրոնզից», 1935 թ., ռուս.): Հ. Օրբելին 1944 թ.-ին ընտրվել է Լոնդոնի հնագիտական ընկերության պատվավոր անդամ, 1935 թ.-ին՝ Թեհրանի համալսարանի պատվավոր պրոֆեսոր, 1945 թ.-ին՝ Իրանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ: Նա պարգևատրվել է Լենինի 2 և Աշխատանքային կարմիր դրոշի 2 շքանշաններով: Հ. Օրբելին մահացել է 1961 թ.-ի փետրվարի 02-ին Լենինգրադում և թաղված է Լենինգրադի Բոգոսլովսկոյե գերեզմանատանը: Հովսեփ Օրբելու կիսանդրին գտնվում է Սանկտ Պետերբուրգ քաղաքում:

Օրբելի եղբայրների տուն – թանգարան



1972թ-ին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի հուլիսի 21-ի թիվ 43 որոշմամբ Օրբելի եղբայրների հիշատակը հավերժացնելու նպատակով՝ տունը, որտեղ ծնվել է ակադեմիկոս Լևոն Օրբելին, վերածվել է տուն-թանգարանի: Ընդգրկված է Ծաղկաձորի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Օրբելի եղբայրների տուն-թանգարանը բացվել է 1982 թվականի հուլիսի 6-ին՝ ակադեմիկոս Լևոն Օրբելու 100-ամյակի միջոցառումների շրջանակում: Տուն-թանգարանի նպատակն է պահպանել և սերունդներին փոխանցել այն հոգևոր արժեքները և իրեղեն վկայությունները, որոնք կապված են Օրբելի եղբայրների անվան հետ: Թանգարանը գտնվում է ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության ներքո: Թանգարանն ունի շուրջ 2000 մշակութային արժեքների հարուստ հավաքածու՝ գրքեր, ձեռագրեր, լուսանկարներ, անձնական իրեր, փաստաթղթեր, կենցաղային առարկաներ: Թանգարանը ստեղծվել է աշխատակիցների ջանքերով և հատկապես Օրբելի եղբայրների հարազատների, բարեկամների, աշակերտների օժանդակությամբ, որոնք նվիրաբերել են թանգարանին նրանց վերաբերող բազմաթիվ նյութեր: Դրանք հիմնականում ձեռք են բերվել Սանկտ-Պետերբուրգ քաղաքից:

Տուն-թանգարանի հիմնական ցուցադրությունը բաղկացած է երկու մասից՝ գիտական և հուշային: Մրահներում ժամանակագրական հերթականությամբ ներկայացված է Օրբելի եղբայրների կյանքի անցած ուղին՝ գիտական և հասարակական գործունեությունը:

Թանգարանի երեք հուշասենյակներում ցուցադրված է Օրբելի եղբայրների աշխատասենյակների կահույքը՝ գրասեղանը, բազմոցը, բաղկաթոռը, գաղտնապահարանը, ինչպես նաև գրքերը, անձնական իրերը, ձեռագրերը, լուսանկարները, փաստաթղթերը և կենցաղային առարկաները:

Հավաքածուի ուշագրավ մասն է կազմում գրադարանը, որն ամփոփում է հայերեն հին հրատարակություններ, ինչպես նաև օտար լեզուներով՝ ռուսերենով, գերմաներենով, իտալերենով գրքեր, որոնցից շատերը կրում են Օրբելիների կողմից արված նշումներ: Այստեղ են պահվում նաև նրանց կողմից հրատարակված աշխատությունները: Թանգարանում կան գրաֆիկական և յուղաներկ նկարներ, ինչպես նաև յուրահատուկ տեխնիկայով բարդու աղվամազից պատրաստված դիմանկարներ: Լուսանկարների հարուստ ֆոնդը վառ պատկերացում է տալիս Օրբելի եղբայրների և նրանց ժամանակակիցների մասին, իսկ կենցաղային զանազան իրերը նրանց ապրած կյանքի և նախասիրությունների լուռ վկաներն են:

Թանգարանի հարանությամբ է գտնվում Օրբելի եղբայրների հուշաքանդակը (քանդակագործ՝ Արտաշես Հովսեփյան, ճարտարապետ՝ Ռոմեո Ջուլիակյան):

Թանգարանում կազմակերպվում են հոբելյաններ, ժամանակավոր ցուցադրություններ, բաց դասեր, գրքերի շնորհանդեսներ, ինչպես նաև գիտական ընթերցումներ, հուշ-երեկոներ նվիրված Օրբելի եղբայրներին, որի ընթացքում հնչում են Օրբելիների սիրած մեղեդիները, ընթերցվում են հատվածներ նրանց նամակներից: Այս միջոցառումներին մասնակցում են քաղաքի միջնակարգ և արվեստի դպրոցների սաները, հրավիրվում են հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ:

Թանգարանը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքի Օրբելի եղբայրների փողոցի 12 հասցեում:



Հուշարձանը գտնվում է Օրբելի եղբայրների տուն-թանգարանի հարևանությամբ: Այն տեղադրվել է 1997 թվականին: Ընդգրկված է Ծաղկաձորի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Օրբելի եղբայրների խմբային հուշարձանում քանդակագործը կերտել է Ռուբեն, Լևոն և Հովսեփ Օրբելիների դիմաքանդակները: Հուշարձանը կառուցված է բազալտից:

- Քանդակագործ՝ Արտաշես Հովսեփյան
- Ճարտարապետ՝ Ռոմեո Ջուլիակյան